

ՈՒՍԿԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Որոշ վարկատեսակներ համարվում են ռիսկային, քանի որ դրանք կարող են հանգեցնել գերվարկավորվածության և ստիպել սպառողներին իրենց պարտքը անընդհատ մարել նոր վարկով: Այս «պարտքային ծուղակ»-ները կարող են հանգեցնել աղքատության, հետևաբար, հաճախ պետական կարգավորման անհրաժեշտություն է առաջանում նման վարկերից սպառողներին պաշտպանելու համար: Հայաստանում և՛ աղքատության, և՛ սպառողների վարկային բեռի մակարդակները բարձր են, իսկ սպառողական վարկերի օգտագործումը լայնատարած է: Այս հետազոտությամբ փորձում ենք պարզել, թե արդյոք ՀՀ-ում սպառողական վարկերը պարունակում են «պարտքային ծուղակ»-ի հանգեցնելու ռիսկ՝ ուսումնասիրելով միջին տարեկան էֆեկտիվ տոկոսադրույքները, վարկերի նվազագույն չափերն ու ժամկետները, համադրելով այդ տվյալները միջին վիճակագրական ընտանիքի ամսական հայեցողական եկամտի հետ:

**Բանալի բառեր** - վարկ, «պարտքային ծուղակ», «payday», բանկ, ՈւՎԿ, աղքատություն, գերվարկավորվածություն, պետական կարգավորում

**Ներածություն**

Աշխարհում գոյություն ունեն վարկատեսակներ, որոնք բնույթով վտանգավոր են սոցիալապես խոցելի խավերի համար: Դրանցից են, օրինակ, «ռոճիկի օրվա» (payday) վարկերը, որոնք մեծ տարածում ունեն ԱՄՆ-ում և շատ այլ երկրներում: Այս վարկատեսակին բնորոշ են վարկի փոքր չափը (նվազագույն ամսական աշխատավարձի 20-40%-ի միջակայքում), մարման կարճ ժամկետը (2-4 շաբաթ) և հարաբերականորեն բարձր միջին տարեկան էֆեկտիվ տոկոսադրույքը (390%+)<sup>1</sup>: Էֆեկտիվ կամ փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս վարկի իրական արժեքը՝ հաշվի առնելով տոկոսավճարների վճարման հաճախականությունը և վարկի հետ կապված բոլոր ծախսերը (օրինակ՝ տրամադրման և սպասարկման վճարները): Այն վարկատուները, որոնք տրամադրում են «payday» վարկեր, պնդում են, որ այս սպառողական վարկատեսակը նախատեսված է առաջին անհրաժեշտության ծախսերի համար (անունդ,

<sup>1</sup> St' u United States. (2013). *Payday loans and deposit advance products: A white paper of initial data findings*, էջ 8-9, Stegman, M. A. (January 01, 2007). "Payday Lending". *Journal of Economic Perspectives*, 21, 1, էջ 169-190:

շտապ բժշկական միջամտություններ և այլն), երբ սպառողը ակնկալում է, որ տվյալ ամսվա ավարտին կստանա աշխատավարձ և կմարի այդ վարկը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ նման վարկատեսակից օգտվողների մի զգալի մասը հայտնվում է «գերվարկավորված» կարգավիճակում, և սրա մասին փաստում են հարյուրավոր հետազոտություններ:

«Գերվարկավորված» իրավիճակում սպառողները ստիպված «թարմացնում» են վարկը՝ ձևակերպելով նոր վարկ, որը ներառում է նախկին վարկի չմարած մասը և տոկոսները, կամ վերցնում են նոր վարկ՝ նախկինը մարելու համար: Երբ այս իրավիճակը շարունակական է դառնում, սպառողները երբեմն հայտնվում են «պարտքային ծուղակ»-ում (debt trap) և ստիպված են լինում անընդհատ մարել նույն «թարմացված» վարկը: Այս իրավիճակից դուրս գալը շատ ծախսատար է, որոշ դեպքերում կարող է պատճառ դառնալ աղքատության կամ սպառողի սոցիալական վիճակի խիստ վատթարացման:

Աշխատանքի նպատակն է պարզել, թե Հայաստանում արդյոք գոյություն ունեն «payday» կամ դրանց նմանվող վարկատեսակներ, որոնք կարող են հանգեցնել «պարտքային ծուղակ»-ի, որը վատթարացնում է սոցիալապես խոցելի խավերի վիճակը, ինչպես նաև կարող է խոչընդոտել աղքատության հաղթահարումը: Հետազոտության հիմքում ընկած են առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող սպառողական վարկերի տրամադրման պայմանների և ակտիվների մարման ժամկետայնության վերլուծությունը և ստացված տվյալների համադրումը ՀՀ մեղիան աշխատավարձ ստացող, միջին վիճակագրական ընտանիքի հայեցողական եկամտի չափի հետ: Փորձ է արվում ցույց տալ, որ ՀՀ-ում մեղիան աշխատավարձ ստացող ընտանիքների մեծ մասը հարաբերականորեն կարճ ժամկետներում չի կարող մարել որոշ սպառողական վարկեր: Այն փաստը, որ, ըստ առևտրային բանկերի և ՈւՎԿ-ների հաշվետվությունների, վարկերը մարվում են ժամանակին, հիմնավոր կասկած է առաջացնում, որ գոյություն ունի «պարտքային ծուղակ»: Տնտեսական քաղաքականության տեսակետից այս ծուղակի հայտնաբերումը թե՛ տեսականորեն և թե՛ գործնականում շատ կարևոր է:

Տնտեսագիտորեն աղքատության նվազեցումը հանրային բարիք է, իսկ դրա բացակայությունը՝ շուկայի բաց<sup>2</sup>, որի շտկման համար անհրաժեշտ է պետական միջամտություն<sup>3</sup>: Քանի որ «պարտքային ծուղակ»-ը կարող է հանգեցնել աղքատության<sup>4</sup> և առաջ բերել պետական

---

<sup>2</sup> Տե՛ս **Գ. Ե. Կիրակոսյան, Ի. Ե. Խղաթյան, Լ. Խ. Խչեյան, Մ. Ն. Թավադյան, Ա. Ա. Վարդանյան, Մ. Ա. Գրիգորյան, Մ. Ն. Հակոբյան, Կ. Ս. Վարդանյան**, Տնտեսագիտության տեսություն, ՀՊՏՀ, 2009, էջ 162,167:

<sup>3</sup> Տե՛ս **Վ. Գաբրիելյան, Հ. Մարգարյան**, Տնտեսության հանրային հատվածի ընդհանուր բնութագիր, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2009, էջ 68-69:

<sup>4</sup> Տե՛ս **Marston, G., & Shevellar, L.** (January 01, 2014). In the shadow of the welfare state: The role of payday lending in poverty survival in Australia. *Journal of Social Policy*, 43, 1, էջ 155-172, **DeYoung, R., & Phillips, R. J.** (January 01, 2013). Interest rate caps and implicit collusion: the case of payday lending. *International Journal of Banking, Accounting and Finance*, 5, 1, էջ 121-158:

կարգավորման անհրաժեշտություն, պետք է նման ծուղակները հայտնաբերել շուկայական բացերը շտկելու համար: Հիմնախնդիրը կարելի է նաև Հայաստանի համար, որտեղ աղքատության մակարդակը 2019 թվականի դրությամբ 26.4% է, իսկ աղքատության վերին գծից ներքև է գտնվում բնակչության 43.8%-ը<sup>5</sup>, որը բավականին բարձր ցուցանիշ է: ՀՀ ԱԺ պատգամավորները բազմիցս նշել են, որ ՀՀ-ում վարկային կազմակերպությունները այնպիսի պայմաններով են տրամադրում սպառողական վարկեր, որ մարդիկ հարստահարվում են կամ հայտնվում անելանելի իրավիճակներում, և անհրաժեշտ է կարգավորել դրանք<sup>6</sup>: Ըստ ՀՀ ԿԲ-ի միջազգային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարկային բեռը չպետք է գերազանցի սպառողի ամսական եկամտի 40-60%-ը, սակայն ՀՀ-ում այն երբեմն շատ ավելի մեծ չափերի է հասնում<sup>7</sup>: Սա նույնպես վկայում է, որ ՀՀ-ում հնարավոր է «պարտքային ծուղակ»-ի առկայություն, որի պատճառներից մեկը կարող է լինել սպառողական որոշ վարկատեսակներից օգտվելը: Այս խնդրին ԿԲ-ն մասնակի լուծում է տվել՝ ընդունելով որոշում, որ 300,000 դրամը չգերազանցող սպառողական վարկեր տրամադրելիս վարկատուները պետք է գնահատեն սպառողի պարտավորությունների ամսական գումարի և սպառողի ամսական եկամտի հարաբերությունը և վարկը տրամադրեն միայն այն դեպքում, եթե այդ հարաբերությունը չի գերազանցում 50%-ը<sup>8</sup>: Սակայն այս որոշումը բավարար չէ «պարտքային ծուղակ»-ի ռիսկը չեզոքացնելու համար:

Աղքատությանը նպաստելուց բացի, բնակչության գերվարկավորվածությունը ունի մի շարք այլ սոցիալ-տնտեսական բացասական հետևանքներ: Գերվարկավորվածության բարձր մակարդակի դեպքում տնտեսական ճգնաժամերը ավելի խորն են լինում, իսկ դրանք հաղթահարելը ավելի երկար է տևում<sup>9</sup>: Բացի դրանից, ըստ որոշ հետազոտությունների, բնակչության գերվարկավորվածության մակարդակը և ՀՆԱ-ի աճը հակադարձ համեմատական մեծություններ են<sup>10</sup>: Սա նշանակում է, որ ռիսկային վարկերի պետական կարգավորումը անհրաժեշտություն է տնտեսության զարգացման և մակրոտնտեսական կայունության համար:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ ԱԿԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020 թ., <https://www.armstat.am/am/?nid=81&id=2323>

<sup>6</sup> Տե՛ս «Պատգամավորները վարկերի տոկոսները սահմանափակելու մասին նախագիծ են ներկայացրել», <https://hetq.am/hy/article/109814>

<sup>7</sup> Տե՛ս «Քաղաքացիների վարկային բեռի և եկամտի միջև հարաբերակցության նորմ է սահմանվելու. ԿԲ», <https://www.azatutyun.am/a/30299463.html>

<sup>8</sup> Տե՛ս Որոշում «Երեք հարյուր հազար դրամը չգերազանցող սպառողական կրեդիտների տրամադրման ընթացքում սպառողների վարկունակության գնահատման կանոնների վերաբերյալ» կարգը հաստատելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149459>

<sup>9</sup> Տե՛ս **Igan, D., Leigh, D., Simon, J., & Topalova, P.** (January 01, 2013). Dealing with household debt. *Financial Crises*, էջ 1-12:

<sup>10</sup> Տե՛ս **Alter, A., Valeckx, N., & Feng, A. X.** (2018). Understanding the Macro-Financial Effects of Household Debt: A Global Perspective, էջ 4-22:

Հանրային քաղաքականության առումով այս վարկատեսակից օգտվողները մեծ մասամբ սոցիալապես առավել խոցելի խավերից են, և վարկային կազմակերպությունները հաճախ շահագործում են նրանց՝ տրամադրելով «վաշխառուական» տոկոսադրույքներով վարկեր, իմանալով, որ նրանք չունեն որևէ այլընտրանք և ստիպված համաձայնվելու են այդ պայմաններին ու հետագայում հայտնվելու են «պարտքային ծուղակ»-ում<sup>11</sup>: Տարածված է նաև այն տեսակետը, որ ՈւՎԿ-ները օգտվում են որոշ սպառողների ֆինանսական գիտելիքների պակասից և շահագործում նրանց՝ գերշահույթ ստանալու նպատակով<sup>12</sup>:

**«Payday» վարկերի և «պարտքային ծուղակ»-ի վիճակագրությունը ԱՄՆ-ում:** ԱՄՆ-ում «payday» վարկատեսակը դաշնային մակարդակով կարգավորում է «Մպառողների ֆինանսական պաշտպանության բյուրո» (Consumer Financial Protection Bureau/CFPB) կառույցը, իսկ ավելի քան 10 նահանգներում այն արգելված է, որի պատճառը վարկատեսակի բարձր ռիսկայնությունն է: Ըստ CFPB-ի՝ այս վարկատեսակից օգտվողների 70%-ը առաջին վարկը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ստիպված է լինում դիմել երկրորդ վարկի՝ առաջինը մարելու համար, իսկ 20%-ը ստիպված է լինում առնվազն ևս 10 անգամ նոր վարկ վերցնել<sup>13</sup>: Այլ հետազոտությունների համաձայն՝ այս վարկատեսակից օգտվողների 50%-ը 12 ամսվա ընթացքում 7 անգամ նման վարկ է վերցնում, որից կարելի է ենթադրել, որ սպառողները այն օգտագործում են ոչ թե խիստ անհրաժեշտ կարճաժամկետ ծախսերի համար, այլ գտնվում են «պարտքային ծուղակ»-ում (քանի որ այս վարկատեսակը շատ թանկ է սպառողի համար և ձեռնտու չէ երկարատև օգտագործման համար, հետևաբար ստիպված են դրանից օգտվում)<sup>14</sup>:

Առհասարակ, տարբեր հետազոտողներ պնդում են, որ «payday» վարկեր տրամադրող վարկային կազմակերպությունները իրենց շահույթի մեծ մասը՝ ընդհուպ 90%-ը, ստանում են «պարտքային ծուղակ»-ում գտնվող վարկառուներից, որոնք տարեկան առնվազն 5 անգամ «թարմացնում» են (rollover) իրենց վարկը<sup>15</sup>: Ավելին, ըստ «Pew» հետազոտական կենտրոնի, վարկատուներին անհրաժեշտ է 4-5 անգամ վարկի «թարմացում», որպեսզի նորմալ շահույթ ստանան, իսկ վարկառուների կեսը ստիպված է լինում առնվազն 11 անգամ վերավարկավորվել մեկ տարվա ընթացքում: Վարկառուն եթե իր վարկը 5 անգամ «թարմացնում» է, նշանակում է, որ տարվա կտրվածքով նա մո-

<sup>11</sup> St' u **Marston, G. and Shevellar, L.** նշվ. աշխ., **Valenti, J. and Schultz E.** (2016). How Predatory Debt Traps Threaten Vulnerable Families, Centre for American Progress, էջ 1-7:

<sup>12</sup> St' u **DeYoung, R. and Phillips, R. J.**, նշվ. աշխ. .:

<sup>13</sup> St' u **Martin, J. D., & Keown, A. J.** (January 01, 2017). A Tutorial on the Economics of Payday Lending: Loan Sharking or Risky Lending. *Ssrn Electronic Journal*, էջ 13:

<sup>14</sup> St' u **Ramirez, S. R.** (October 02, 2019). An examination of firm licensing behaviour after a payday-loan ban. *Applied Economics*, 51, 46, էջ 5090-5103:

<sup>15</sup> St' u **King, U. and Parrish L.** (2007). Springing the Debt Trap: Rate caps are only proven payday lending reform. Centre for Responsible Lending, էջ 3:


տավորապես 84 օր վարկառուի կարգավիճակում է, իսկ միջին վիճակագրական վարկառուն իրականում 150-ից 212 օր է այդ կարգավիճակում<sup>16</sup>: Սա ավելի քան բավարար է, որ վարկային կազմակերպությունը նորմալ շահույթ ստանա: Այս վարկատեսակից օգտվողների զգալի մասը պատկանում է ռիսկային խմբերին (ունի ցածր կամ անկայուն աշխատավարձ, չունի լավ վարկային պատմություն, չունի գրավ դնելու առարկա և այլն), որոնց համար առավել վտանգավոր է այս վարկատեսակը, քանի որ նրանց սոցիալական վիճակը ավելի կտրուկ է վատանում, եթե հայտնվում են «պարտքային ծուղակ»-ում:

Ավստրալիայում այս վարկատեսակից օգտվողների 40%-ը գտնվում է աղքատության գծից ներքև<sup>17</sup>, և սա է պատճառներից մեկը, որ պետությունը հատուկ ուշադրություն է դարձնում այս վարկատեսակի կարգավորմանը: Ինչպես արդեն նշել ենք, աղքատության նվազեցումը հանրային բարիք է, իսկ այդ բարիքի բացակայությունը՝ շուկայի ձախողում, որի շտկման պատասխանատվությունը կրում է պետությունը: Քանի որ այս վարկատեսակը կարող է հանգեցնել գերվարկավորման, ինչպես նաև խոչընդոտել աղքատության հաղթահարումը, անհրաժեշտ է համապատասխան կարգավորումներով պաշտպանել սպառողներին «պարտքային ծուղակ»-ից՝ միաժամանակ աշխատելով չսահմանափակել նրանց համար վարկերի հասանելիությունը:

**Սպառողական վարկերի պատկերը Հայաստանում:** ՀՀ-ում սպառողական վարկերը հիմնականում տրամադրում են 17 առևտրային բանկեր և 44 վարկային կազմակերպություններ:

### Նկար 1

Տնային տնտեսությունների պարտավորությունների կառուցվածք, 2021 թ. (ձախ առանցքը՝ մլրդ դրամ, աջ առանցքը՝ տոկոս)<sup>18</sup>



<sup>16</sup> Տե՛ս **Kirsch, L., Mayer, R. N. and N. I. Silber.** 2014. "The CFPB and Payday Lending: New Agency/Old Problem". *The Journal of Consumer Affairs.* 48 (1), էջ 1-16:

<sup>17</sup> Տե՛ս **Marston, G. and Shevellar, L.,** նշվ. աշխ.: :

<sup>18</sup> Տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2021թ., էջ 16 – 18, [https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report\\_2021.pdf](https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report_2021.pdf)

Երրորդ տեղում են գրավատները, որոնց տրամադրած վարկերի ծավալը անհամեմատ փոքր է: Նաև նշենք, որ ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների 92.7%-ը բաժին է ընկնում հենց բանկերին և վարկային կազմակերպություններին (84.5% + 8.2%), իսկ գրավատները ակտիվների չնչին մասնաբաժնի են տիրապետում (0.14%)<sup>19</sup>:

Թեև 2021 թվականի սկզբի դրությամբ սպառողական վարկերի ծավալը նվազել է մոտ 1%-ով<sup>18</sup>, որը կարող է պայմանավորված լինել 2020 թ. սկիզբ առած համաճարակով և պատերազմով, այնուամենայնիվ սպառողական վարկերի աճող դինամիկան վերջին տարիներին անհերքելի փաստ է: Ըստ ՀՀ ԿԲ տվյալների՝ 2018 թ. դիտվել է 19.5%, 2019 թ.՝ 37.9%, իսկ 2020 թ.՝ 30% աճ<sup>20</sup>: Այսպիսով, քանի որ ՀՀ-ում գոյություն ունի սպառողական վարկերի աճող դինամիկա և ավելի քան 550,000 վարկառու<sup>18</sup>, ապա նաև նշել ենք, որ որոշ սպառողական վարկատեսակներ միջազգային պրակտիկայից հայտնի են նրանով, որ կարող են հանգեցնել «պարտքային ծուղակ»-ի, հետևաբար նաև աղքատության, անհրաժեշտ է ավելի ուշադիր ուսումնասիրել ՀՀ-ում առաջարկվող սպառողական վարկերը և դրանց ռիսկայնությունը:

**ՀՀ-ում ՈւՎԿ-ների և առևտրային բանկերի կողմից տրամադրվող սպառողական վարկերի պայմանները:** Այժմ դիտարկենք որոշ ՈւՎԿ-ների սպառողական վարկերի տրամադրման պայմանները (տվյալները վերցրել ենք կազմակերպությունների կայքէջերից): Նշենք, որ բոլոր ՈւՎԿ-ների տրամադրած սպառողական վարկերի ընդհանուր ծավալի 80%-ից ավելին բաժին է ընկնում ստորև նշված ՈւՎԿ-ներին՝

*Աղյուսակ 1*

**ՀՀ որոշ ՈւՎԿ-ների՝ սպառողական վարկերի տրամադրման պայմանները**

	Տարեկան փաստացի տոկոսադրույք	Վարկի նվազագույն չափ (ՀՀ դրամ)	Վարկի ժամկետ
Կրեդո Ֆինանս	51.2 – 74.3%	100,000 – 1,500,000	6 - 72 ամիս
Մայկրեդիտ	47.38 – 71.79%	100,000 – 500,000	Մինչև 12-24 ամիս
Միկրո Կապիտալ	35 – 79.2%	250,000 – 2,500,000	6 - 36 ամիս
Յունիվերսալ Կրեդիտ	38.65 – 58.72%	200,000 – 500,000	6 – 24 ամիս
Ագրո Կրեդիտ	22.19 – 31.88%	50,000 – 2,000,000	3-36 ամիս
Գլոբալ Կրեդիտ	24 - 181%	50,000 – 1,400,000	1 – 36 ամիս
Արեգակ	25.5 – 29.8%	Մինչև 300,000	Մինչև 12 ամիս
ԷՎԼՈՖ	40.9%	300,000 – 500,000	36 ամիս
ՖԻՆԲՍ	23.6 – 82.1%	150,000 - 5,000,000	6-36 ամիս
Էքսպրես Կրեդիտ	22.01 – 29.60%	310,000 – 2,000,000	24 ամիս

<sup>19</sup> Տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկ, Ֆինանսական համակարգ և վերահսկողություն, <https://www.cba.am/am/SitePages/fscintroduction.aspx>

<sup>20</sup> Տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2018-2020 թթ.:

ԱրՖին	74 - 141%	100,000-200,000	1-12 ամիս
Բլեսս	32.8- 36.1%	150,000 – 300,000	18-24 ամիս
Կամուրջ	25.47 – 76.46%	Մինչև 2,500,000	1-36 ամիս
Կրեդիտ Կոնցեպտ	25.75 – 37.32%	150,000 – 5,000,000	-
ՍԵՖ Ինտերնելյուլ	34 - 40%	10,000 – 3,000,000	Մինչև 60 ամիս
Նոր Հորիզոն	31.47 – 51.5%	50,000 – 1,000,000	6 - 24 ամիս
Նորման Կրեդիտ	16.3 – 43.44%	100,000 10,000,000	- 6-36 ամիս
Պրեմիում Կրեդիտ	47.12 – 57.23%	5000 – 750,000	1-36 ամիս
Սմարթ Կրեդիտ	44.92 – 50.07%	100,000 – 1,000,000	6 - 24 ամիս
Ֆասթ Կրեդիտ	23.12 – 42.49%	5000 – 500,000,000	24 ամիս
ԱԵՍ Կրեդիտ	26.2 – 33.1%	100,000 – 1,000,000	Մինչև 24 ամիս

Առաջին հայացքից միջին տարեկան էֆեկտիվ տոկոսադրույքները այնքան բարձր չեն, որպեսզի այս սպառողական վարկերը դասենք «payday» վարկերի շարքին, թեև ԱՄՆ-ի 18 նահանգներում **առավելագույն** միջին տարեկան տոկոսադրույքը սահմանված է 36%, իսկ ՀՀ-ում ունենք մինչև 181%-ի հասնող էֆեկտիվ տոկոսադրույքներ (օրինակ՝ «Գլոբալ Կրեդիտ»-ում): Այնուամենայնիվ, այս սպառողական վարկերի միջինացված տոկոսադրույքը 26.56% է (հիմնվելով վերոնշյալ ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա), իսկ մեղիանը՝ 24.4%: Այսպիսով, փաստացի տոկոսադրույքը խնդրահարույց չէ, սակայն գոյություն ունի այլ խնդիր՝ կապված վարկերի մարման ժամկետների և նվազագույն չափերի հետ, որին կանոնադառնանք հողվածի հաջորդ հատվածում:

Այժմ դիտարկենք որոշ առևտրային բանկերի՝ սպառողական վարկերի տրամադրման պայմանները (էֆեկտիվ տոկոսադրույքը չենք դիտարկում, քանի որ այն օրենքով սահմանափակված է բանկերի համար և չի կարող գերազանցել 24%-ը): Նշենք, որ բանկերն ընտրվել են ըստ այս վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության:

### *Աղյուսակ 2*

#### **ՀՀ որոշ առևտրային բանկերի կողմից սպառողական վարկերի տրամադրման պայմանները**

	Վարկի նվազագույն չափ (ՀՀ դրամ)	Վարկի ժամկետ
Յունիբանկ	310.000	մինչև 48 ամիս
Կոնվերս Բանկ	300,000	12-36 ամիս
Ամերիա Բանկ	100.000	մինչև 60 ամիս
Ինեկո Բանկ	200.000	մինչև 48 ամիս
Արարատ Բանկ	100,000	24 ամիս
Այդի Բանկ	2.500.000	մինչև 120 ամիս

Ինչպես ՈւՎԿ-ների դեպքում, այնպես էլ այստեղ հատկանշական է այն, որ վարկի նվազագույն չափը բավականին մեծ է, իսկ վարկի ժամկետները որոշ դեպքերում չունեն նվազագույն շեմ (օրինակ՝ վարկը կարող է մեկ ամսով ձևակերպվել), որոշ դեպքերում այդ շեմը բավականին ցածր է (օրինակ՝ 3 ամիս), իսկ այլ դեպքերում այն չի պահպանվում, քանի որ պայմանագրով նախատեսված չէ որևէ տույժ վաղաժամկետ մարման համար, որը, դատելով տարեկան ֆինանսական հաշվետվություններից, հաճախ է տեղի ունենում:

- ՈւՎԿ-ների մեծ մասի կողմից տրամադրվող **նվազագույն սպառողական վարկի չափը** կազմում է միջինը **120,000** դրամ:

- Դիտարկված բանկերի կողմից տրամադրվող **նվազագույն սպառողական վարկի չափը** կազմում է միջինը 585,000 դրամ (202,000՝ առանց «ԱյԴի Բանկ»-ի):

Վարկերի նվազագույն չափի և դրանց տրամադրման ժամկետների դիտարկումը անհրաժեշտ էր՝ ցույց տալու համար, որ ՀՀ-ում միջին վիճակագրական ընտանիքների մեծ մասը պարզապես չի կարող նման պայմաններով վարկեր մարել առանց ակտիվների վաճառքի կամ օգնության, թեև, ըստ բանկերի և ՈւՎԿ-ների հաշվետվությունների, այդպիսի վարկերից օգտվում են շատերը և մարում բավականին կարճ ժամանակահատվածում: Մա կասկածելի հանգամանք է և հիմք է տալիս ենթադրելու, որ ՀՀ-ում «պարտքային ծուղակ» կարող է գոյություն ունենալ:

**ՀՀ միջին վիճակագրական ընտանիքի ամսական հայեցողական եկամուտը:** ՀՀ քաղաքացու մեղիան անվանական աշխատավարձը (չենք օգտագործում միջինը, քանի որ այն ճշգրտորեն չի արտացոլում բնակչության մեծ մասի ստացած աշխատավարձը) 2019 թվականի դրությամբ կազմում էր 118,000 ՀՀ դրամ<sup>21</sup>: Հաշվի առնելով եկամտային հարկը (22%՝ 2021 թ. հունվարի 1-ից), կենսաթոշակային վճարը (3.5%՝ 2021 թ. հունվարի 1-ից) և դրոշմանիշային վճարը (3000 դրամ՝ 100,001-ից 200,000 աշխատավարձի դեպքում)՝ մաքուր աշխատավարձի միջնարժեքը կազմում է մոտավորապես 85,000 դրամ:

Համադրելով սա այն փաստի հետ, որ Հայաստանում ընտանիքի միջին չափը 3.6 անձ է, իսկ եկամուտ վաստակողների միջին թիվը՝ 1.57, ստացվում է, որ միջին չափի ընտանիքի ամսական մաքուր եկամուտը կազմում է **133,450** դրամ (1.57\*85,000): Աղքատության միջին գիծը ընդունելով 44,048 դրամ<sup>22</sup>, կարող ենք պնդել, որ միջին չափի ընտանիքը նվազագույն պարենային զամբյուղի և ոչ պարենային սպրանքների ձեռքբերման համար պետք է ծախսի ամսական առնվազն **123,334** դրամ (2\*44,048 + 1.6\*22,024՝ ընդունելով 2 ծնող և 1.6 երեխա, որոնք

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԿ, Աշխատուժի հետազոտության անվանազերծված միլիոնավայրների բազա և հարցաթերթ (ըստ տնային տնտեսության անդամների), <https://www.armstat.am/am/?nid=212>, <https://www.aravot.am/2019/06/06/1048494/>

<sup>22</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020:




50%-ով ավելի քիչ են սպառում)<sup>23</sup>:


Հաշվելով ամսական մաքուր աշխատավարձի և առաջին անհրաժեշտության ծախսերի տարբերությունը՝ տեսնում ենք, որ ՀՀ միջին վիճակագրական ընտանիքը ունենում է ամսական **9,884** դրամ՝ հայեցողական (discretionary) սպառման կամ ծախսեր կատարելու համար: Եթե նույնիսկ այս թիվը կրկնապատկենք՝ ենթադրելով, որ ընտանիքը բարեկամներից ստանում է օգնություն, և ընդունենք **20,000** դրամ, կտեսնենք, որ կա պոտենցիալ խնդիր սպառողական որոշ վարկատեսակներ մարելու հետ: Դիտարկում ենք ընտանիքի հայեցողական եկամուտը, քանի որ այս գումարից է վճարվում վարկի ամսական մարումը:

**Բանկերի և ՈւՎԿ-ների ակտիվների մարման ժամկետայնությունը:** Հաշվարկելով առևտրային բանկերի և ՈւՎԿ-ների վարկային պորտֆելներում առկա վարկերի մինչև մեկ և մինչև երեք ամսվա մարման ժամկետայնությունները, ստանում ենք հետևյալ պատկերը (նկ.2 և նկ.3)՝

**Նկար 2. ՀՀ ՈւՎԿ-ների վարկերի մարման ժամկետայնությունը**



**Նկար 3. ՀՀ բանկերի վարկերի մարման ժամկետայնությունը**



<sup>23</sup> St´u Myanmar Ministry of Planning and Finance., Myanmar Ministry of Planning and Finance., World Bank Group., & World Bank eLibrary - York University. (2017). *Technical Poverty Estimation Report: Myanmar Poverty and Living Conditions Survey*. Washington, D.C: The World Bank, էջ 46:

1. Բոլոր նշված ՈւՎԿ-ների կտրվածքով վարկերի 5%-ից ավելին միջինը ունեն **մինչև 1 ամսվա** մարման ժամկետ: Առանձին ՈւՎԿ-ների դեպքում այդ տոկոսը կարող է հասնել **21**-ի: Իսկ վարկերի **11.5%**-ը (միջինը) ունի **մինչև 3 ամսվա** մարման ժամկետ: Մեղիանը կազմում է **10.2%**:

2. Բոլոր նշված բանկերի կտրվածքով վարկերի **11.8%**-ից ավելին միջինը ունեն մինչև 3 ամսվա մարման ժամկետ: Մեղիանը կազմում է **12.5%**:

Քանի որ բիզնես և հիփոթեքային վարկերը սովորաբար չեն ունենում 1-ից 3 ամսվա մարման ժամկետ, կարող ենք պնդել, որ վերոնշյալ երկու կետերում «մինչև մեկ և երեք ամսվա մարման ժամկետ ունեցող» վարկերի մեծ մասը սպառողական վարկեր են: Այս դեպքում ստացվում է, որ սպառողների մի մասը 1-ից 3 ամսում մարում է առնվազն 125,000 դրամի վարկ (նվազագույն վարկի չափը ընդունելով 100,000 դրամ, իսկ միջին տարեկան էֆեկտիվ տոկոսադրույքը՝ 25%, քանի որ նշել էինք, որ միջին տոկոսադրույքը 26.56% է, իսկ մեղիանը՝ 24.4%): Մա, սակայն, հնարավոր չէ մեղիան աշխատավարձ ստացող միջին վիճակագրական ընտանիքի համար, որը ամսական 20,000 դրամ կարող է ուղղել վարկի մարմանը: Այստեղ կարևոր է նշել մի քանի կարևոր կետ:

- Թեև միջին էֆեկտիվ տոկոսադրույքը ընդունել ենք 25%, այն նմանատիպ կարճաժամկետ սպառողական վարկերի համար սովորաբար զգալիորեն ավելի բարձր է լինում ՈւՎԿ-ների դեպքում:

- Մենք հաշվարկը կատարել ենք մեղիան աշխատավարձ ստացողների համար, իսկ նվազագույն աշխատավարձ ստացողների դեպքում (որոնց ավելի հավանական է, որ պետք կգա կարճաժամկետ սպառողական վարկ) ամսական 20,000 դրամից էլ ավելի քիչ է լինելու վարկի մարմանն ուղղված գումարը:

- Մենք 20,000 դրամը դիտարկել ենք որպես լավագույն դեպք, և այլ աղբյուրներից եկամուտ չստանալու դեպքում այդ գումարը ավելի քիչ է լինելու:

- Հաշվում ենք նվազագույն վարկի չափի համար, թեև սպառողը կարող է ավելի մեծ վարկեր վերցնել:

- Հաշվի չենք առնում վարկերի տրամադրման և սպասարկման, ինչպես նաև հայտերի ուսումնասիրման վճարները:

Այս հինգ կետերից բխում է, որ նույնիսկ լավագույն պայմանների դեպքում նմանատիպ սպառողական վարկերի մարումը միջին վիճակագրական քաղաքացիներից շատերի համար պարզապես անհնար է, եթե չունեն գրավ դրված գույք, օրինակ՝ ոսկի: Այսպիսով, շեշտը դրվում է մեղիան եկամուտ ունեցող և այլ ակտիվներ չունեցող (ոսկի, ավտոմեքենա և այլն) քաղաքացիների վրա, որոնք բավականին շատ են, և վիճակագրորեն անհնար է, որ նրանց առնվազն մի մասը չլինի այս վարկատեսակներից օգտվողների թվում:

**Արդյունքների վերլուծությունը** թույլ է տալիս եզրակացնել, որ այն վարկերը, որոնք մարվել են 1-ից 3 ամսում՝

- կա՛մ մարվել են մեդիանից բարձր աշխատավարձ ունեցողների կողմից,
- կա՛մ մարվել են բարեկամների օգնությամբ (որը կարող է վարկով եղած լինի),
- կա՛մ մարվել են գույքային աղքատացման հաշվին,
- կա՛մ սպառողը վերցրել է նոր վարկ՝ նախկինը մարելու համար, որը, ինչպես արդեն քննարկել ենք, կարող է «պարտքային ծուղակ»-ում հայտնվելու պատճառ դառնալ:

ՈւՎԿ-ների դեպքում նմանատիպ կարճաժամկետ սպառողական վարկերը ավելի շատ օգտագործում են ռիսկային հաճախորդները, որոնք ունեն համեմատաբար ցածր կամ անկայուն աշխատավարձ և չունեն լավ վարկային պատմություն: Պատճառը այն է, որ ՈւՎԿ-ների առաջարկած կարճաժամկետ սպառողական վարկերը ունեն բանկերի համեմատ զգալիորեն բարձր միջին տարեկան էֆեկտիվ տոկոսադրույք և ձեռնտու չեն: ՈւՎԿ-ները սպասարկում են ռիսկային հաճախորդներին՝ ռիսկը փոխհատուցելով բարձր տոկոսադրույքի միջոցով, իսկ բանկերը՝ ոչ<sup>24</sup>: Մա է պատճառը, որ ռիսկային հաճախորդները առավելագույնս օգտվում են ՈւՎԿ-ներից: Այս պնդումը տրամաբանական է նաև «payday» վարկերի համատեքստում: Սրանից հետևում է, որ առաջին կետը («օգտվում են մեդիանից բարձր աշխատավարձ ստացողները») քիչ հավանական է, և ավելի հավանական է, որ սպառողները վարկը մարում են կա՛մ իրենց ակտիվների վաճառքի միջոցով (գույքային աղքատացման հաշվին), կա՛մ պարտքով գումար են վերցնում իրենց ծանոթներից (այս դեպքում վարկային բեռը չի նվազում) կա՛մ ձևակերպում են նոր վարկ, որը, ինչպես սկզբում արդեն նշել ենք, պարունակում է «պարտքային ծուղակ»-ում հայտնվելու ռիսկ:

Բանկերի դեպքում, որոնք ավելի ցածր էֆեկտիվ տոկոսադրույքներով են տրամադրում վարկերը, կրկին հարց է առաջանում, թե 1-3 ամսում ինչպես է վարկերի մի զգալի տոկոս մարվում, երբ մեդիան աշխատավարձ ստացողների համար նույնիսկ մայր գումարի մարումը կպահանջի շատ ավելի երկար ժամանակ՝ տոկոսը չհաշված (օրինակ՝ «Յունիբանկի» դեպքում միայն մայր գումարի մարումը պետք է տևի 15.5 ամիս): Կարող ենք պնդել, որ բանկերից օգտվողները ավելի բարձր աշխատավարձ ունեն, հետևաբար՝ ամսական հայեցողական եկամուտը 20,000-ից շատ է, սակայն նույնիսկ այս դեպքում կասկածելի է նման պայմաններով տրամադրվող վարկերի մարումը 1-3 ամսում: Նույնիսկ եթե այս սպառողների ամսական հայեցողական եկամուտը ընդունենք 100,000 դրամ (մեդիան աշխատավարձ ստացողի հայեցողական եկամտից 5 անգամ ավելի բարձր), կրկին չեն կարող 1-3 ամսում մարել մայր գումարը (տոկոսը չհաշված): Նույնիսկ եթե բանկերից

<sup>24</sup> See Asian Development Bank, Impact of Restrictions on Interest Rates In Microfinance, ADB Sustainable Development Working Paper Series, № 45, September 2016.

օգտվողների դեպքում «պարտքային ծուղակ»-ում հայտվելու ռիսկը ավելի փոքր է, այնուամենայնիվ այն առկա է, և պետք է ավելի խորությամբ ուսումնասիրել այդ հարցը:

Թեև անհատական տվյալներ առկա չեն, համադրելով աղքատության թվերը, վարկառուների թիվը և սպառողական վարկերի միջին կշիռը ՈւՎԿ-ների և բանկերի վարկային պորտֆելներում՝ կարող ենք պնդել, որ հավանական բաշխման տեսակետից բնակչության առնվազն 5%-ը գտնվում է «պարտքային ծուղակ»-ում կամ մարում է վարկերը գույքային աղքատացման հաշվին:

### **Եզրակացություններ**

1. ՀՀ-ում առկա են որոշակի վարկատեսակներ, որոնք թեև «payday» վարկերի բնութագրին չեն համապատասխանում (քանի որ միջին տարեկան էֆեկտիվ տոկոսադրույքը այդքան բարձր չէ), այնուամենայնիվ պարունակում են որոշակի ռիսկեր:

2. ՀՀ մեդիան աշխատավարձ ստացող, ոչ առաջնային անհրաժեշտության գրավադրելի գույք կամ դրամական աջակցություն չունեցող միջին վիճակագրական ընտանիքը իր ամսական եկամտով (անհրաժեշտ ծախսերը կատարելուց հետո) չի կարող երեք (առավել ևս՝ մեկ) ամսում մարել մի շարք փոքր սպառողական վարկատեսակներ, թեև առևտրային բանկերի և ՈւՎԿ-ների հաշվետվություններում ակտիվների մարման ժամկետները ուսումնասիրելով՝ տեսնում ենք, որ այդպիսի ժամկետայնությամբ վարկերը առկա են և որոշ ՈւՎԿ-ների վարկային պորտֆելներում նույնիսկ զգալի կշիռ ունեն: Պետք է շեշտել, որ ՈւՎԿ-ների դեպքում այդ վարկատեսակներից հիմնականում օգտվում են ցածր կամ անկայուն աշխատավարձ ունեցողները:

3. Մրանից հետևում է, որ կա հիմնավորված ռիսկ, որ սպառողների մի մասը, օգտվելով այս վարկատեսակներից, հայտնվում է «պարտքային ծուղակ»-ում, որը կարող է հանգեցնել աղքատության կամ առնվազն վատթարացնել արդեն իսկ խոցելի սոցիալական դրության մեջ գտնվողների վիճակը: «Պարտքային ծուղակ»-ում հայտնվելը գերվարկավորվածության ցուցիչ է, որը, ինչպես արդեն նշել ենք, ունենում է սոցիալ-տնտեսական մի շարք բացասական հետևանքներ, և հաճախ պահանջվում է պետական կարգավորում այդ հետևանքները կանխելու համար:

*Հետազոտության սահմանափակումները:* Թեև մենք ցույց տվեցինք, որ վիճակագրորեն անհնար է, որ բավարար գույք չունեցող և մեդիան աշխատավարձ ստացող քաղաքացիները վերցնեն սպառողական վարկեր, որոնք կարող են ժամանակին մարվել առանց աղքատացման, այնուամենայնիվ վարկառուների հստակ շրջանակը և նրանց կողմից վերցված վարկերի ծավալը գնահատված չեն: Պարզելու համար, թե արդյոք սպառողների մի մասը հայտնվում է «պարտքային

ծուղակ»-ում և ստիպված է լինում բազմիցս նոր վարկ վերցնել կամ վարկը «թարմացնել», անհրաժեշտ է բնակչության շրջանում կատարել հարցում և հասկանալ, թե կարճաժամկետ սպառողական վարկերից օգտվողները ինչպես են մարում այդ վարկերը, և որքան է ռիսկը, որ նրանք ստիպված կլինեն նոր վարկ վերցնել նախկինը մարելու համար: Այս հարցի պատասխանը հնարավոր չէ տալ հաշվետվությունների ուսումնասիրման միջոցով, և անգամ առևտրային բանկերին և ՈւՎԿ-ներին այդ տվյալները շուկայի կտրվածքով հայտնի չեն:

**ТИГРАН ГАБРИЕЛЯН – Социально-экономические последствия рискованных кредитов в Республике Армения.** – Некоторые виды ссуд считаются рискованными, поскольку они часто вызывают чрезмерную задолженность и вовлекают потребителей в цикл заимствований. Эти долговые ловушки могут привести к бедности, поэтому для решения этой проблемы иногда необходимо государственное регулирование. В Армении уровень бедности и уровень долга высоки, но при этом широко распространено использование потребительских кредитов. Мы пытаемся выяснить, несут ли потребительские кредиты в Армении риск попадания в долговую ловушку, исследуя годовые процентные ставки (APR), минимальные размеры и продолжительность потребительских кредитов, предлагаемых в Армении, и сравнивая эти параметры с располагаемым доходом средней семьи в Армении. Обнаруживается, что большинство семей со средним доходом не могут выплатить стандартные потребительские ссуды в течение 1-3 месяцев, хотя банки и кредитные организации заявляют, что значительная часть этих ссуд выплачивается в течение этого периода. Это несоответствие может означать, что потребители пролонгируют свои ссуды или выплачивают их, используя другие ссуды, из чего следует, что они попали в долговую ловушку. В результате у нас есть основания полагать, что в Армении существуют долговые ловушки, но для подтверждения этого необходимы дальнейшие исследования.

**Ключевые слова:** кредит, день выплаты жалованья, долговая ловушка, бедность, кредитная организация, банк, чрезмерная задолженность, государственное регулирование

**TIGRAN GABRIELYAN – The Socio-Economic Consequences of Risky Loans in the Republic of Armenia.** – Certain types of loans are considered risky since they often cause over-indebtedness and lead consumers into a cycle of borrowing. These debt traps can result in poverty, that is why government regulation is sometimes needed to address the issue. Both poverty and debt levels are high in Armenia, while the use of consumer loans is widespread. We attempt to find out whether consumer loans in Armenia carry a risk of leading to a debt trap by examining the annual percentage rates (APRs), minimum sizes, and durations of consumer loans offered in Armenia and comparing those parameters to the disposable income of an average family in Armenia. We find that most families with an average income cannot pay off standard consumer loans within 1-3 months, even though banks and credit organizations claim that a significant portion of these loans is paid off within that time frame. This inconsistency may mean that consumers are rolling over their loans or paying them off using other loans, which means they have fallen into a debt trap. As a result, we have reason to suspect that debt traps exist in Armenia, and further research is required to validate that claim.

**Key words:** loan, payday, debt trap, poverty, credit organization, bank, over-indebtedness, government regulation